ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի ընդլայնում մինչև 15 մլն. տ/տարի» նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային լսումների (քննարկումների) երկրորդ փուլի

ՀՀ, Լոռու մարզ, գ. Թեղուտ Արձանագրությունը կազմվել է 2017 թվականի օգոստոսի 29-ին

2017 թվականի օգոստոսի 24-ին ժամը 13:00-ից մինչև 15:10-ը ՀՀ Լոռու մարզի Թեղուտ համայնքի մշակույթի տանը (հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, գ.Թեղուտ, 1-ին փողոց, թիվ 3) տեղի ունեցան ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ նաև՝ Փորձաքննական կենտրոն) և ՀՀ Լոռու մարզի Թեղուտ համայնքի ղեկավարի (այսուհետ նաև՝ Քննարկումների պատասխանատու) կողմից «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (մասնավորապես՝ 26-րդ հոդվածի) և ՀՀ կառավարության 19.11.2014թ. «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» № 1325-Ն որոշմամբ հաստատված հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգի համաձայն հրավիրված՝ «Թեղուտ» ՓԲ ընկերության կողմից ներկայացված «Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի ընդլայնում մինչև 15 մլն. տ/տարի» նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային լսումներ (քննարկումներ):

Հանրային քննարկումներն անց էին կացվում «Թեղուտ» ՓԲ ընկերության կողմից ներկայացված «Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի ընդլայնում մինչև 15 մլն. տ/տարի» նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի փորձաքննության (երկրորդ) նախնական փուլի շրջանակներում: Հանրային քննարկումների վերաբերյալ հանրային ծանուցումն իրականացվել էր զանգվածային լրատվամիջոցներով և էլեկտրոնային հայտարարություններով: Մասնավորապես, հանրային լսումների վերաբերյալ հայտարարությունը տպագրվել է «Առավոտ» օրաթերթի 2017 թվականի օգոստոսի 10-ի թիվ 151/5489 համարում, տեղադրվել է ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայքում (www.mnp.am) և նախաձեռնող «Թեղուտ» ՓԲ ընկերության պաշտոնական կայքում (www.teghout.am):

Հանրային լսումներին (քննարկումներին) մասնակցում էին ՀՀ Լոռու մարզի Թեղուտ և Շնող համայնքների ավագանու անդամներ, համայքների բնակիչներ, նախաձեռնող ընկերության ներկայացուցիչներ, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ, ընդամենը՝ 88 անձ: Հանրային լսումների (քննարկումների) ամբողջ ընթացքը տեսաձայնագրվել է առանց ընդհատումների: Մասնակիցների ցանկը ստորագրություններով և հանրային լսումների (քննարկումների) ընթացքի տեսաձայանգրությունը՝ համապատասխան սկավառակներով կցվում են սույն արձանագրությանը:

Հանրային լսումները (քննարկումները) վարել է Քննարկումների պատասխանատուն, ով նաև ապահովել է արձանագրումը: Մինչև հանրային լսումների (քննարկումների) սկիզբը հանրության կողմից գրավոր դիտողություններ և առաջարկություններ չեն ներկայացվել, ինչի մասին հայտարարվել է նաև քննարկումների ընթացքում: Գրավոր դիտողություններ և առաջարկություններ չեն ներկայացվել նաև հանրային լսումներից (քննարկումներից) հետո՝ մինչև սույն արձանագրության կազմման պահը:

Բացելով հանրային քննարկումները Քննարկումների պատասխանատու՝ ՀՀ Լոռու մարզի Թեղուտ համայնքի ղեկավար Ֆրունզե Նորեկյանը նախ ողջունեց բոլոր ներկաներին և շնորհակալություն հայտնեց քննարկումներին մասնակցելու համար, այնուհետև ներկայացրեց հանրային լսումների (քննարկումների) նպատակն ու օրակարգը, որից հետո խոսքը տվեց նախաձեռնող ընկերության ներկայացուցչին՝ հայտի հիմնական ցուցանիշները ներկայացնելու համար:

Նախաձեռնողի անունից ելույթ ունեցավ «Թեղուտ» ՓԲ ընկերության (այսուհետ նաև՝ Նախաձեռնող) գլխավոր տնօրենի տեղակալ Սահակ Կարապետյանը և նշեց, որ Նախաձեռնողի կողմից ներկայացված «Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի ընդլայնում մինչև 15 մլն. տ/տարի» նախագիծը կազմվել է հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզի Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի երկրաբանական կառուցվածքը՝ բացահանքի խորացմանը զուգընթաց հանքաքարում պղնձի պարունակության աստիճանական նվազման միտումը և դրա հիման վրա թողարկվող հիմնական արտադրանքի (պղնձի խտանյութի) քանակի ու իրացման ծավալների անկում թույլ չտալու անհրաժեշտությունը: Նա նաև նշեց, որ հանքաքարի սպասվող աղքատացումը՝ պղնձի պարունակության աստիճանական նվազումը հիմնավորված է պետական հաշվեկռային պաշարների վերաբերյալ փաստաթղթերով, որի մասին Նախաձեռնողը հանրությանը տեղեկացրել է ինչպես հանքավայրի շահագործման գործող նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունների շրջանակներում 2006 թվականի մարտին ու հոկտեմբերին անցկացված հանրային լսումների ընթացքում, այնպես էլ հետագա այլ քննարկումների շրջանակներում: Ավելին, 2006 թվականին անցկացված շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունների արդյունքում ամրագրվել է հանքաքարի աղքատացման արդյունքում արդյունահանման ծավալների ավելացման անհրաժեշտությունն ու համապատասխան փաստաթղթերը շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացնելու պահանջը: Հաշվի առնելով, որ սպասվող հանքաքարում օգտակար հանածոյի պարունակության անկումը՝ հանքավայրի շահագործման սկզբի համեմատ կազմում է շուրջ 50 տոկոս, ուստի և նախատեսվում է արդյունահանվող հանքաքարի քանակության ավելի քան կրկնապատկում՝ հասցնելով տարեկան 15 մլն տոննայի: Հանքաքարի արդյունահանման ծավալների ավելացումը տարեկան 7 մլն տոննայից տարեկան 15 մլն տոննայի նախատեսվում է կատարել համաչափորեն՝ ապահովելով դրա համար անհրաժեշտ նախապատրաստական ու այլ աշխատանքների կատարումը: Նա հատուկ նշեց նաև, որ «Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի ընդլայնում մինչև 15 մլն. տ/տարի» նախագծի իրականացման շրջանակներում նախատեսվող գործունեությունն ամբողջությամբ իրականացվելու է ՀՀ Լոռու մարզի Շնող և Թեղուտ համայնքների վարչական սահմաններում գտնվող՝ «Թեղուտ» ՓԲ ընկերությանը պատկանող լեռնահանքային համալիրի տարածքում, լրացուցիչ հողատարածքների ձեռք բերման անհրաժեշտություն չի առաջանալու, իսկ Նախաձեռնողն իրականացնելու է ընդլայնման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու հետ կապված բոլոր անհրաժեշտ միջոցառումները:

Անդրադառնալով բուն հանրային քննարկումներին Ս.Կարապետյանը նշեց, որ սույն հանրային քննարկումները հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգով սահմանված բնորոշմամբ հանդիսանում են երկրորդ փուլի հանրային քննարկումներ, որոնք անց են կացվում Նախաձեռնողի կողմից ներկայացված «Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի ընդլայնում մինչև 15 մլն. տ/տարի» նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի փորձաքննության նախնական փուլի շրջանակներում, որի արդյունքում (ներառյալ սույն հանրային քննարկումները) Փորձաքննական մարմնի կողմից կազմվում և Նախաձեռնողին է ներկայացվում համապատասխան տեխնիկական առաջադրանքը՝ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում հնարավոր ազդեցության ամբողջական, գումարային գնահատման գործընթացի պահանջներն ամփոփող հաշվետվության բովանդակությունն ու գործընթացի մասնակիցների շրջանակները սահմանող փաստաթուղթը:

Ելույթ ունեցավ Փորձաքննական կենտրոնի գլխավոր մասնագետ Կարինե Մովսիսյանը, ով պարզաբանումներ տվեց ինչպես Ձեռնարկողի կողմից ներկայացված հայտի, այնպես էլ Փորձաքննական կենտրոնի կողմից իրականացվող փորձաքննության փուլերի ու ընթացքի վերաբերյալ: Նա մասնավորապես նշեց, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի համաձայն Ձեռնարկողի կողմից նախատեսվող գործունեությունը համարվում է «Ա» կատեգորիայի գործունեություն, որը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության երկու փուլով՝ նախնական գնահատման հայտի փուլի փորձաքննական գործընթացի և

հիմնական փուլի փորձաքննական գործընթացի: Ներկայում Փորձաքննական կենտրոնի կողմից իրականացվում է Ձեռնարկողի կողմից ներկայացված նախնական գնահատման հայտի փուլի փորձաքննական գործընթաց, որի շրջանակներում պարզվում է նախնական գնահատման հայտի լրակազմությունն ու համապատասխանությունը օրենքով սահմանված պահանջներին: Փորձաքննական գործընթացի այս փուլի արդյունքում լիազոր մարմնի (ՀՀ բնապահպանության նախարարության) կողմից տրվում է տեխնիկական առաջադրանքը: Կ. Մովսիսյանը նաև պարզաբանումներ տվեց օրենսդրության պահանջների և փորձաքննական ընթացակարգերի, ինչպես նաև հանրային ծանուցման ու քննարկումների իրականացման, այդ թվում՝ գրավոր դիտողություններ և առաջարկություններ ներկայացնելու ընթացակարգերի վերաբերյալ:

Ելույթ ունեցավ նախագծող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲ ընկերության ներկայացուցիչ Հովիկ Նիկողոսյանը ներկայացրեց «Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի ընդլայնում մինչև 15 մլն. տ/տարի» նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի ընդհանուր դրույթները՝ տալով անհրաժեշտ պարզաբանումներ:

Հանրային լսումների (քննարկումների) մասնակիցները Նախաձեռնողի կողմից ներկայացված՝ «Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի ընդլայնում մինչև 15 մլն. տ/տարի» նախագծի և շրջակա միջավայրի վրա դրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ բանավոր դիտողություններ և առաջարկություններ չարեցին:

Միաժամանակ, ներկաների կողմից բարձրացվեցին Շնող և Թեղուտ համայնքների բնակիչներին հուզող՝ Նախաձեռնող ընկերության ընթացիկ գործունեությանը, վերջինիս կողմից ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ շրջակա միջավայրին ու հարակից համայնքներին առնչվող) կատարմանը վերաբերող մի շարք հարցեր, որոնց պատասխանեցին Նախաձեռնողի և նախագծող կազմակերպության ներկայացուցիչները: Մասնավորապես, Շնող համայնքի բնակիչներ Լևոն Ալիխանյանը, Վարդան Վարդանյանը և Աշոտ Ադամյանը և այլոք բարձրացրեցին Թեղուտի պղնձամոլիբդենային համալիրի պոչամբարի հատվածից տեղի ունեցող արտահոսքերից Շնող գետի աղտոտման հետ կապված հարցեր, պահանջելով լուծել աղտոտվածության հարցը, քանի որ դա անմիջականորեն վնաս է հասցնում համայնքի բնակիչների մասնավոր այգեգործական տնտեսություններին, ովքեր այդ գետի ջուրն օգտագործում են ոռոգման նպատակով: Ելույթ ունեցողների կողմից բարձրացվեցին նաև համայնքի բնակչության սոցիալական վիճակին ու բժշկական զննության ու բժշկական օգնություն ստանալու հնարավորություններին, համայնքների բնակչության զբաղվածության ապահովմանը վերաբերող հարցեր:

Նախաձեռնողի ներկայացուցիչը պարզաբանումներ տվեց բոլոր բարձրացված հարցերի հետ կապված: Նա մասնավորապես նշեց, որ բարձրացված հարցերը չեն վերաբերում Նախաձեռնողի կողմից բերված հայտին, իսկ դրանց մի մասն անգամ չի վերաբերում Նախաձեռնողին և (կամ) նրա ընթացիկ գործունեությանը: Առանձին մասնավոր հարցերի վերաբերյալ Նախաձեռնողը կմշակի համապատասխան լուծումները և դրանց կատարման վերաբերյալ տեղեկատվությունը երկու համայնքներին կտրամադրի համանքի ղեկավարի միջոցով: Նա նաև խնդրեց Շնող և Թեղուտ համայնքների ղեկավարներին կազմել համայնքների այն բնակիչների ցանկը, ովքեր պնդում են, որ իրենց մասնավոր այգեգործական տնտեսություններին վնաս է հասցվել Շնող գետի ջրով ոռոգումների արդյունքում, որպեսզի ներգրավված մասնագիտացված կազմակերպության կողմից համապատասխան հողատարածքներում՝ դրանց սեփականատերերի համաձայնությամբ ու մասնակցությամբ, կատարվեն հողային ծածկույթի նմուշարկումներ, որոնց արդյունքում հնարավոր կլինի պարզել բնակիչների պատճառված հնարավոր վնասում Նախաձեռնողի մեղքի առկայության (բացակայության) ու համապատասխան քաղաքացիաիրավական հարաբերությունների ծագման հարցերը:

Ս.Կարապետյանը նաև նշեց, որ ինչպես այս, այնպես էլ հետագայում անցկացվելիք այլ քննարկումների ընթացքում բարձրացված՝ Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրում օգտակար հանածոյի արդյունահանման ծավալների ավելացմանը վերաբերող հարցադրումներն ու առաջարկությունները Նախաձեռնողի կողմից հաշվի կառնվեն հանքավայրի նախագծային փաստաթղթերի փաթեթի կազմման ու լրամշակման ընթացքում և կստանան համապատասխան լուծումներ:

Ամփոփելով քննարկումները Քննարկումների պատասխանատուն, Փորձաքննական կենտրոնի և Նախաձեռնողի ներկայացուցիչները շնորհակալություն հայտնեցին բոլոր ներկաներին հանրային լսումներին (քննարկումներին) մասնակցության համար և առաջարկեցին օգտվել օրենսդրությամբ սահմանված հնարավորությունից և Նախաձեռնողի կողմից ներկայացված «Թեղուտի պղնձա-մոլիբդենային կոմբինատի ընդլայնում մինչև 15 մլն. տ/տարի» նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հնարավոր առկա բոլոր առաջարկությունները և դիտողությունները ՀՀ կառավարության 19.11.2014թ. «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» №1325-Ն որոշմամբ կարգով սահմանված ժամկետներում գրավոր ներկայացնել Քննարկումների պատասխանատուին, ով կապահովի դրանց վերահասցեագրումը Նախաձեռնողին և Փորձաքննական մարմնին, որպեսզի դրանք հաշվի առնվեն տեխնիկական առաջադրանքը կազմելու ընթացքում:

Քննարկումների պատասխանատու՝

ՀՀ Լոռու մարզի Թեղուտ համայնքի ղեկավար Ֆրունզե Նորեկյան

Ձեռնարկող՝

«Թեղուտ» ՓԲ ընկերություն

Գլխավոր տնօրենի տեղակալ Սահակ Կարապետյան